# Ժամանակագրական աղյուսակ

**Ք.ծ.ա. X–VI հազարամյակի կեսեր** – նոր քարի դարը Հայկական լեռնաշխարհում:

**Ք.ծ.ա. VI հազարամյակի կեսեր** – պղնձի հայտնագործումը և պղնձի-քարի դարաշրջանի սկիզբը Հայկական լեռնաշխարհում:

**Ք.ծ.ա. IV հազարամյակի կեսեր – III հազարամյակի կեսեր** – վաղ բրոնզի դարը Հայկական լեռնաշխարհում:

**Ք.ծ.ա. 2492 թ. օգոստոսի 11** – Հայոց ձորի ճակատամարտը:

**Ք.ծ.ա. XVI դ. – XIII դ կեսերը** – Միտաննի պետության գոյության ժամանակաշրջանը:

**Ք.ծ.ա. XV – XIII դդ.** – Հայասա թագավորության գոյության ժամանակաշրջան:

**Ք.ծ.ա. XIII դար** –Ասորեստանի թագավոր Սալմանասար I-ի առաջին հիշատակությունը Նաիրիի մասին որպես երկրանուն:

**Ք.ծ.ա. IX դար** – արձանագրություններում որպես Ուրարտուի արքա Արամե Հայկազունու հիշատակումը:

**Ք.ծ.ա. 850-ական թթ.** – Ուրարտուում սկսում է իշխել Արամ (Արամե, Արամու) Հայկազունին:

**Ք.ծ.ա. 835-825 թթ**. – Սարդուրի I-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 825-810 թթ.** – Իշպուինիի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 810-786 թթ.** – Մենուայի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 786-764 թթ.** – Արգիշտի I-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 785 թ.** – Արգիշտի I-ի արշավանքը դեպի հյուսիս՝ Դիաուեխի երկիր:

**Ք.ծ.ա. 782 թ.** – Էրեբունի (Երևան) քաղաք-ամրոցի կառուցումը:

**Ք.ծ.ա. 776 թ**. – Արգիշտիխինիլի քաղաքի կառուցումը:

**Ք.ծ.ա. 764-735 թթ.** – Սարդուրի II-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 735-713 թթ.** – Ռուսա I-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 714 թ.** – Սարգոն II-ի արշավանքը Ուրարտու:

**Ք.ծ.ա. 685-645 թթ.** – Ռուսա II-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 612 թ.** – Նինվեի գրավումը և Ասորեստանի կործանումը:

**Ք.ծ.ա. 590 թ.** – Ուրարտուի (Վանի թագավորության) անկումը:

**Ք.ծ.ա. 580-ական թթ.** – Երվանդյանների արքայատոհմի հիմնումը Հայաստանում:

**Ք.ծ.ա. 580-570-ական թթ.** – Երվանդ I-ի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 560-525 թթ.** – Տիգրան I Երվանդյանի գահակալության տարիները:

**Ք.ծ.ա. 553 թ**. – պարսից Կյուրոսի ապստամբությունը Մարաստանի դեմ:

**Ք.ծ.ա. 550 թ.** – Աքեմենյան Պարսկաստանի հիմնադրումը:

**Ք.ծ.ա. 522–521 թթ.** – հպատակ երկրների, այդ թվում՝ Հայաստանի ապստամբությունը Աքեմենյան տերության դեմ:
**Ք.ծ.ա. 336–323 թթ.** – Ալեքսանդր Մակեդոնացու գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 334 թ.** – Ալեքսանդր Մակեդոնացու ներխուժումը Փոքր Ասիա:
**Ք.ծ.ա. 331 թ.** – Գավգամելայի ճակատամարտը: Մեծ Հայքի անկախության վերականգնումը:
**Ք.ծ.ա. 260-ական թթ.** – Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության ստեղծումը:
**Ք.ծ.ա. 220–201 թթ.** – Երվանդ IV Վերջինի գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 201 թ.** –Սելևկյանները գրավում են հայկական չորս թագավորությունները:
**Ք.ծ.ա. 190 թ.** – Մագնեսիայի ճակատամարտը:
**Ք.ծ.ա. 189 թ.** – Արտաշես I-ի հաստատվելը Մեծ Հայքի գահին և Արտաշեսյանների արքայատոհմի հիմնադրումը:
**Ք.ծ.ա. 189-160 թթ.** – Արտաշես I-ի գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 188 թ.** – Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը:
**Ք.ծ.ա. 160-115 թթ.** – Արտավազդ I-ի գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 95-55 թթ.** – Տիգրան Մեծի գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 94 թ**. – Ծոփքի միացումը Մեծ Հայքին: Հայ-պոնտական դաշինքի կնքումը:
**Ք.ծ.ա. 87 թ**. – Տիգրան Մեծը ներխուժումը Պարթևստան:
**Ք.ծ.ա. 83 թ.** – Տիգրան Մեծը բազմելը Սելևկյան գահին:
**Ք.ծ.ա. 69-66 թթ**. – հայ-հռոմեական պատերազմը:
**Ք.ծ.ա. 69 թ. հոկտեմբերի 6** – Տիգրանակերտի ճակատամարտը:
**Ք.ծ.ա. 68 թ. սեպտեմբեր** – Արածանիի ճակատամարտը:
**Ք.ծ.ա. 66 թ. աշուն** – Արտաշատի հաշտության պայմանագրի կնքումը:
**Ք.ծ.ա. 55-34 թթ.** – Արտավազդ II-ի գահակալության տարիները:
**Ք.ծ.ա. 53 թ.** – Խառանի ճակատամարտը:
**Ք.ծ.ա. 36 թ.** – Անտոնիոսի պարթևական արշավանքը:
**Ք.ծ.ա. 34 թ.** – Անտոնիոսի հայկական արշավանքը և Արտավազդ II-ի գերեվարումը:
**Ք.ծ.ա. 31 թ.** – Ակցիումի ծովային ճակատամարտը:
**Ք.ծ.ա. 30–20 թթ.** – Արտաշես II-ի գահակալության տարիները:
**1 թ.** – Արտաշեսյան արքայատոհմի անկումը:
**18-34 թթ.** – Զենոն-Արտաշեսի գահակալության տարիները:
**54 թ.** – պարթև արքա Վաղարշի եղբայր Տրդատի հաստատվելը հայոց գահին:

**54-64 թթ.** – 10-ամյա պատերազմը Հռոմի և պարթևահայկական դաշնակցության միջև:
**62 թ.** – Հռանդեայի ճակատամարտը:
**64 թ.** – Հռեանդեայի հաշտության պայմանագրի կնքումը:
**66-88 թթ.** – Տրդատ I-ինի գահակալության տարիները:
**88-110 թթ.** – Սանատրուկ արքայի գահակալության տարիները:
**117-140 թթ.** – Վաղարշ I-ի գահակալության տարիները:
**186-198 թթ.** – Վաղարշ II-ի գահակալության տարիները:
**226 թ.** – Սասանյան արքայատոհմի հաստատումը Պարսկաստանում:
**297 թ.** – Ոսխայի ճակատամարտը:
**298 թ**. – – Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի կնքումը:
**298-330 թթ.** – Տրդատ III Մեծի գահակալության տարիները:
**301 թ.** – Քրիստոնեության հռչակումը Հայաստանում որպես պետական կրոն:
**303 թ.** – Վաղարշապատի Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցումը:
**330-338 թթ.** – Խոսրով Կոտակի գահակալության տարիները:
**339-350 թթ**. – Տիրանի գահակալության տարիները:
**350-368 թթ.** – Արշակ II-ի գահակալության տարիները:
**354 թ.** – Հայ առաքելական եկեղեցու առաջին օրենսդիր ժողովի գումարումը Աշտիշատում:
**363 թ.** – «Ամոթալի» հաշտության պայմանագրի կնքումը:
**370 -374 թթ.** – Պապի գահակալության տարիները:
**371 թ.** – Ձիրավի ճակատամարտը:
**370-374 թթ.** – Վարազդատի գահակալության տարիները:
**387 թ.** – Հայաստանի առաջին բաժանումը Հռոմի և Պարթևստանի միջև:
**388-414 թթ**. – Վռամշապուհի գահակալության տարիները:
**405 թ.** – հայոց գրերի գյուտը:
**428 թ.** – Արշակունյաց թագավորության վերացումը:
**443 թ.** – Շահապիվանի եկեղեցական ժողովը:
**450-451 թթ.** – Վարդանանց պատերազմը Պարսկաստանի դեմ:
**450 թ.** – Խաղխաղի (Ղազախ) ճակատամարտը:
**451 թ. մայիսի 26** – Ավարայրի ճակատամարտը:
**481-484 թթ.** – Վահանանց պատերազմը:
**481 թ.** – Ակոռիի ճակատամարտը:
**482 թ. գարուն** – Ներսեհապատի ճակատամարտը:
**484 թ.** – Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումը:
**485 թ. աշուն** – Վահան Մամիկոնյանի նշանակվելը Հայաստանի մարզպան:
**536 թ.** – Բյուզանդական Հայաստանի բաժանումը չորս պրովինցիայի:

**539 թ.** – հայերի ապստամբությունը Արևմտյան Հայաստանում:

**572 թ. փետրվարի 2** – ապստամբների հարձակումը Դինում գտնվող պարսկական զորքի վրա:

**591 թ.** – պարսկա-բյուզանդական պայմանագրով Հայաստանի երկրորդ բաժանումը:

**640թ.** – արաբների առաջին արշավանքը Հայաստան:

**642–643 թթ.** – արաբների երկրորդ արշավանքը Հայաստան:

**652 թ.** – հայ-արաբական պայմանագրի կնքումը:

**701 թ.** – արաբները նվաճում են Հայաստանը:

**703 թ.** – հակաարաբական առաջին ապստամբությունը: Վարդանակերտի ճակատամարտը:

**705 թ.** – հայ նախարարների հրկիզումը Նախճավանում:

**719 թ.** – Հովհան Օձնեցի կաթողիկոսի գլխավորությամբ Դվինում եկեղեցական ժողովի գումարումը:

**774–775 թթ.** – համաժողովրդական մեծ ապստամբություն արաբական տիրապետության դեմ:

**775 թ. ապրիլի 24** – Արձնիի ճակատամարտը:

**850–855 թթ.** – հակաարաբական ապստամբությունը Հայաստանում:

**855 թ.** – Աշոտ Բագրատունու նշանակվելը հայոց սպարապետ:

**862 թ.** – Աշոտ Բագրատունու ճանաչվելը հայոց իշխանաց իշխան:

**885 թ. օգոստոսի 26** – Աշոտ Բագրատունու օծվելը հայոց թագավոր:

**885–890 թթ.** – Աշոտ I-ի գահակալության տարիները:

**890–914 թթ.** – Սմբատ I-ի գահակալության տարիները:

**893 թ.** – Դվինի ավերիչ երկրաշարժը:

**894 թ.** – Դողսի ճակատամարտը:

**908–1021 թթ.** – Վասպուրականի թագավորության գոյության տարիները:

**914–928 թթ.** – Աշոտ II Երկաթի գահակալության տարիները:

**923 թ.** – Սևանի ճակատամարտը:

**928–953 թթ.** – Աբասի գահակալության տարիները:

**953–977 թթ.** – Աշոտ III Ողորմածի գահակալության տարիները:

**961 թ.** – Անիի հռչակվելը հայոց մայրաքաղաք:

**963–1065 թթ.** – Կարսի թագավորության գոյության տարիները:

**977–990 թթ.** – Սմբատ II-ի գահակալության տարիները:

**981–1113 թթ.** – Տաշիր-Ձորագետի թագավորության գոյության տարիները:

**987–1170 թթ.** – Սյունիքի թագավորության գոյության տարիները:

**990–1020 թթ.** – Գագիկ I-ի գահակալության տարիները:

**998 թ.** – Ծումբի ճակատամարտը:

**1001 թ.** – Անիի Մայր տաճարի շինարարության ավարտը:
**1022 թ.** – Տրապիզոնի պայմանագրի կնքումը:
**1042–1045 թթ.** – Գագիկ II-ի գահակալության տարիները:
**1045 թ.** – Անիի գրավումը և Բագրատունյաց թագավորության անկումը: